ԾԻՏԸ

Լինում է, չի լինում՝ մի ծիտ:

Մի անգամ էս ծտի ոտը փուշ է մտնում: Դես է թռչում, դեն է թռչում, տեսնում է՝ մի պառավ փայտ է ման գալիս, որ թոնիրը վառի, հաց թխի: Ասում է.

– Նանի՛ ջան, նանի՛, ոտիս փուշը հանի՛, թոնիրդ վառի՛, ես էլ գնամ քուջուջ անեմ, գլուխս պահեմ:

Պառավը փուշը հանում է, թոնիրը վառում:

Ծիտը գնում է, հետ գալիս, թե՝ իմ փուշը հե՛տ տուր ինձ:

Պառավն ասում է.

– Փուշը թոնիրն եմ գցել:

Ծիտը կանգնում է, թե՝

– Իմ փուշը տո՛ւր. թե չէ՝ դես կթռչեմ, դեն կթռչեմ, լավաշդ կառնեմ, դուրս կթռչեմ:

Պառավը մի լավաշ է տալիս: Ծիտը լավաշն առնում է թռչում: Գնում է տեսնում՝ մի հովիվ առանց հացի կաթ է խմում: Ասում է.

– Հովի՛վ ախպեր, կաթն ինչու՞ ես առանց հացի խմում: Լավաշն ա՛ռ, կաթի մեջ բրդի՛, կե՛ր: Ես էլ գնամ քուջուջ անեմ, գլուխս պահեմ:

Գնում է, հետ գալիս, թե՝ լավաշս տո՛ւր:

Հովիվն ասում է.

– Կերա:

– Չէ՛, իմ լավաշը տո՛ւր, թե չէ՝ դես կթռչեմ, դեն կթռչեմ, գառնուկդ կառնեմ, դուրս կթռչեմ:

Հովիվը գառը տալիս է:

Ծիտը գնում է, տեսնում՝ հարսանիք են անում, գառ չունեն: